

ժամանակ զգայ կորուստը և որոնէ. նոյնպէս նաև օտար ձագերու իրեններուն հետ միացած ժամանակ զգայ ձագերուն թիւին առաւելութիւնը և օտարը վանէ:— Բայց այս ենթադրութիւնը իրական ենթադրութիւն մը չէ: Մարդ մը երբեք համարելով չէ որ կըզայ այս կամ այն զուգային կորուստը: այլ զգացումներու լիութեան մէջ թերութիւն մը իմանալով. նոյնպէս է նաև անասունը, որ ձագերուն հօտէն զոյնէն, արտաքին երևոյթէն և ուրիշ զգայութիւններով (մանաւանդ բնազգով) կըզայ կորուստը կամ աւելին: Եթէ անասնոց ձագերուն թուական առաւելութիւնը իրը չափ ընդունինք անոնց հաշուական կարողութեան բարձրութեան ընդունելու ենք նաև թէ արու անասունը՝ որ զրեթէ միշտ (բացառութիւն լինելով մի քանի անասուններ) անդէս է իր հայրութեան, հաշուական կարողութեան կողմէ ալ ստոր է էդէն: Եւ այս է զարմանալին, որ արու անասունը՝ որ քաջութեամբ ուժով, ճարպիկութեամբ, ձայնով, զոյնով և գեղեցիկութեամբ (այսինքն հողիով և մարմնով) էդէն բարձր է, մտաւոր կարողութեան կողմէ անկէ ստոր ըլլայ:

Ըսուեցաւ վերը թէ անասնոց ձագերուն թիւը անոնց սովորներուն հետ ուղիղ համեմատական է. ըստ այսմ բազմաթիւ խողը հաշուական կարողութեան կողմէ աւելի բարձր ըլլալու էր շունէն և կապիկէն, որոնց մտաւոր կարողութիւնը անհամեմատ կերպով աւելի բարձր է անմար և անմիտ խոզէն. ինչ որ անընդունելի է:

Երկրորդ միջոցը անասուններուն սովորական կեանքին քննութեամբ է. կապիկը իրեն արուած փոքրիկ պտուղները ծոցը կամ բերնին մէկ անկիւնը կը սրահէ. շունը կուշտ ժամանակ դառն ոսկորները կը տանի մի քանի տեղ հողին տակ կը ծածկէ կը սրահէ:

Եթէ, այս պահանջներն թիւը դադանի կերպով նուազեցնենք, իրենք կրնան արդեօք զգալ:

Երրորդ միջոցն է անասուններուն վրայ առանձին փորձեր՝ որոնք ամէնէն աւելի ազահով արդիւնքի մը կրնան հասցնել մեզի: Այսպիսի փորձերու ենթարկեց կապիկները

ամբիկացի դիտուն մը՝ որ կապիկներուն լեզուն ուսումնասիրեց:

Ինքը կապիկներուն կուտար նախ մի քանի պտուղներ կամ շաքարեղէններ և յետոյ ետ կը պահանջէր. ստանալէ վերջ նորէն կակսէր մի առ մի կապիկին վերադարձնել ստացած նիւթերը, մէջէն հատ մը կամ քանի մը հատ ծածկաբար պահելով: Կամ թէ անոնց այդպիսի նիւթեր տալէ վերջ՝ դադանի կերպով կը վերցնէր անոնցմէ մէկ կամ մի քանի հատ և կը զիտէր թէ կապիկները կարող են համբերով իմանալ պահուածներուն թիւը և ետ պահանջել կամ որ և իցէ ավելի հատ թիւն յայտնել: Այս փորձերով դիտունը այն եզրակացութեան հասաւ թէ կապիկները՝ որ զործարանաւորութեան կողմէ մարդոց ամէնէն աւելի մօտիկ անասունները կը համարուին, երեքէն աւելի չեն կարող համբեր. անոնք դիտուն միայն ուրեմն մէկ երկու, երեք, երեք բառը կապիկներու լեզուով միանգամայն «չատ» կը նշանակէ:

Հրաշնայ Յ. Աճառեան

(նոյն տարեթիւն)



## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊՈՒՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԳԱՍՈՒԹԻՒՆ և ՈՒՍՈՒԱՅՐ)

(Շարունակութիւն) \*

Դ.

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՀԱՅԵԱՅԻՆ ԱՌԱՍՊՈՒՆԵՐԸ ՊԵՆՆԱԳԱՍՈՒԹԻՒՆ:

(Առասպել:—Առասպելի մէջ եղած ճշմարտութիւնը հաւաստելը:—«Ռոմ» պատմաւոր:—Այսպիսով թորնոցին մեկնում պատկերները:—Հայոց առասպելները:—Այսպիսով



նութիւն եւ մեկնութիւն. — Ո՛րքան արժէք ունի «գարդարեալ» պատմութիւնը: — Թէ ինչո՞ւ խորենացին ստեղծ է օգտուում առասպելներին:)

Ինչ հայեացք ունի խորենացին առասպելների կամ որ նոյն է՝ ժողովրդական երգերի, զրոյցների եւն. վրայ. ինչպէս եւ որ չափով է օգտուում նա այդ նիւթերից իւր գրած Պատմութեան մէջ: Այս հարցերի պատասխանը որ անհրաժեշտ է խմանալ խորենացու յիշած առասպելների ուսումնասիրութեան համար, լիովին կարելի է ստանալ խորենացու հայոց պատմութիւնից:

Առասպել բառը խորենացու մէջ միայն մէկ նշանակութիւն ունի այն է մի պատմութիւն — լինի երգ, զրոյց, միւթոս (mythus), երգ վիպասանաց, առեկաւոր ասացուած, թէ ըստ կամ յերկրած շինծու դրաւոր պատմութիւն — որ ճշմարիտ չէ: հաւաստի չէ:

«Իրաւոր առասպելներ: խորենացին պատմութիւն է գրում եւ իբրեւ պատմիչ պէտք է հարկաւ իւր հասկացած կերպով իւր ազդեցիկների հաւատարմութեան մասին մտածէ: Այս հոգը նա շատ ունի. այլ է թէ որքան է յաջողել նորան այդ Սա միայն «հաւաստին» «ճշմարիտ» ու «անսուտ» է ուղում գրել Նորա կարծիքով ճշմարիտ պատմութիւնը՝ առասպել է գտնուում երբ պատմադիրներն իրենց ուղած ձեով փոփոխում են պատմութեան գաղափարութիւնը անունները ժամանակը եւն. «Ջաւառաստին որչափ կարացեալ իրազմացն ընտրեալ բանիցն կարդիցաք զճնունդս . . . որում ոչ զոք ընդդիմանալ կարձեմ ի միտս ունողացն բայց թէ զճշմարտութեանն որ խորհելով քակել զոմ, յառասպելս զճշմարիտ քանս ակործելով փոփոխել փութացել» (Ա. դ.): Հմտ. «ըստ ակործելոյ որպէս կամեցան իւրաքանչիւրքն (վիպադիւք) փոփոխել զանունանն եւ զգրոյցս եւ զժամանակս»:

խորենացու համար ճշմարիտ պատմութիւն է ամենից առաջ Աստուածաշէնի պատմութիւնը եւ ապա Սուրբ Հարց գրութիւնները: Իսկ արտաքին պատմադիրների մէջ կայ բան՝ որ սուտ է, կայ բան՝ որ ճշմարիտ է. «Երբեմն ի ճշմարտէնս երբեմն ի ստէն» (Ա.

դ.): Ինչ որ ս. Դրբի պատմութեան համեմատ է՝ ճշմարիտ է, ինչ որ համեմատ չէ՝ առասպել է. Եւ սկսայց յորոյց եւ այլքն որք յեկեղեցւոյց եւ ոյք ըստ Բրիտանոսի աւելորդ համարելով զարտաքնոցն երկրորդել յաղագս իսկզբանն առասպելս, բայց թէ զկինան՝ ժամանակ ինչ արդեօք. եւ զորսս յայտնիս որում եւ աստուածայինքն ի ճարճ զայցնն պատմութիւնք քանից» (Ա. դ.): Առասպել չէ խորենացու «սիրելի» «քան զշատս արդարաւսս» «բիւրոսանն Սիրիզդեայ» պատմածը թէ «Ետաջ քան զբուրդն . . . եւ զբազմարարսն լինելոյ ձայնի ազգի մարդկան» եւ զկնի նաւարկութեան Բոհուութեայ ի Հայս, Զբուրանն եւ Տիտանն եւ Ետաղառութէ լինելն իշխանք երկրի — որովհետեւ այդ պատմութիւնը թէպէտ եւ տարբեր անուններով, ս. Դրբի պատմութեան նման է, իսկ նոյն տեղում (Ա. դ.) Զբաղաշտի անունները Զբուրանն (Սեմ) «սկիզբն եւ հայր աստուածոցն» առասպել է, որովհետեւ ս. Դրբի համեմատ չէ: Այսպէս եւ նոյն տեղում Տիտանն եւ Ետաղառութէի կռուի մասին ընդդէմ Զբուրանն գրում է. «Զայսոսիկ թէպէտ առասպելս ոք, թէպէտ ճշմարտութիւն հաշուել համարեսցիս բայց ես որպէս հաւանեալ եմ ըստում ինչ ճշմարիտ է»: Իսկ խորենացին իւր այս համոզմունքը հաստատում է դարձեալ ս. Դրբով եւ կիտրացւոյց Կոստանդեայ Նալիփանոս եպիսկոպոսի «Հերձուածոցն յանդիմանութիւն» գրքով:

Այս դրաւոր առասպելները եթէ մեզ հետաքրքրում են՝ հարկաւ միայն այն տեսակետի, որ միեւնոյն կամ նման հայեացք եւ հասկանալու եղանակ ունի խորենացին եւ ժողովրդական առասպելների նկատմամբ եւ մինչեւ իսկ նոյն բաներն է գործ դնում դրաւոր առասպել եւ ճշմարիտ պատմութիւն, ժողովրդական առասպել եւ անոր մէջ բովանդակած խելութիւն որոշելու համար: Այդ բաներն են՝ հաւաստի, ճշմարիտ անսուտ, ըստոյզ եւ նմանները որ զանազան ձևերով յեղյեղում է. իսկ հակառակն՝ անհաւաստի, ըստ

1. «Եւ նոցանի զոր ինչ հաւաստիս կարծեմք առաւել» (Ա. դ.): «Եւ ի հաւաստիս ճշմարտութեանն»



յոժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան» (Ա. իր.)։ «արտաքոյ ճշմարտութեան» (Ա. ե.)։ Լէն Խեղբով դատելով՝ կամ թէ Աստուածաշնչի հետ համեմատելով առասպելի միջից հաւաստին գտնելու համար գործ է ածուած նոյնպէս ծմնարկոյ ճշմարտութեամբ և յայտնել բառերը։ «Յայտարարութիւն սակաւութիւն թէ ըստարտաքնոցն ասացեալ է Բէլլը ըստաստածային բանից ճշմարտութեամբ Նարբութ է» (Ա. է.)։ «Բայց ծանիր զԱմբառդ անունն ... ճշմարկոյ Շամբութ է» (Ա. իր.)։ Նման պատմութիւններէց ճշմարկոյ համարում է ոչ միայն այն որ ս. Դրբի համեմատ է, այլ և այն որ «ոմով» է գրուած. «Այլ հաւաստի մեղ թուեցաւ որ ի Մար Աբայն Կաթինայէ քըննութիւն քաղդէական մատենից քան զայսոսիկ. քանդի ոմով իմն ասէ և զպատմապատեհաբան յայտնէ» (Ա. ժր.)։ Դսկ Բագրատունեաց՝ Հայկից սերուած լինելու մասին առասպելն անհաւաստի է համարում «զի ի բայ բանից և անոմ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակալէ» (Ա. իր.)։<sup>1</sup>

Անցնենք ժողովրդական առասպելներին։

Բ. Յունաց եւ պարսից առասպելների մասին խօսուած է Ա. դրբի յաւելուածներէ մէջ, որոնք Խորենացու հայեացքը ժողո-

վրդական առասպելների վրայ՝ շատ պարզ կերպով ցոյց են աւելի մեղ։ Յունաց առասպելները պերճ և ողորկ։ «Հանդերձ պատմապաւ» ուրիշ խօսքով «ոմով» են և «զճշմարտութիւն իրացն այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ»։ Այսպիսի «այլաբանութիւն» է համարում և Պրոմէթէոսի առասպելը. «Եւ ընդէր... Պրոմէթէոս գողացեալ զառ ի յաստուածոցն հուր և շնորհեալ մարդկան. որ է այլաբանութիւն և ոչ բերէ ասել կարգ բանիս» (Ա. է.)։

Դսկ պարսից առասպելները Բիւրասպ Աժդահակի մասին համարում է փիճուն և անճոռնի, «անյարմար և անոմ բանք»։ այլ և «անբանութիւն»։ Նոցա հերոսները «սուտ» են՝ և հենց առասպելներն էլ են «առասպելք սուտք»։ «անմիտ և անհանճար բանից յարմարանք» որոնցով գրադուելու պէտք չկայ<sup>2</sup>, քանի որ այդ առասպելները շատ հին լինելով՝ նոյն իսկ պարսիկներին անհասկանալի են։<sup>3</sup> Սակայն և այնպէս Խորենացին պարսից առասպելներն էլ համարում է այլաբանութիւն, ինչպէս «Պահլաւաց առասպելների» համար (Բ. հ.) պորգապէս գրում է. «... թողով դառասպելաց նոցա բարբառնջմունս։ Բանդի անտեղի է մեղ այժմ՝ երկրորդել զառասպելն յաղագս... (զայիս է առասպելների համառօտ բովանդակութիւնը) և որ ինչ այլաբանութեան բերէ կարգ։ Այլ մեք ասացուք միայն զստոյն որ ինչ ճշմարտութեանն վայելէ պատմութիւն»։ Այսպէս և Բիւրասպ Աժդահակի անոմ ու փիճուն առասպելներն ևս այլաբանութիւն ընդունելով՝ կարելի է համարում թէպէտ մեծ գծուարութեամբ<sup>4</sup> մեկնել կամ Խորենացու խօսքով «պատմապատալ անբանութեան նոցա» եւ զարդարել զանգարուն»։ ուրիշ խօսքով նորից «շարագրել» յունաց առասպելների պէս ոմով, «հանդերձ

(Ա. դ.)։ «Եւ Է ճշմարիտ եւ մի ոք յերկուսցի» (Ա. ե.)։ «Յեն ջրհեղեղին երիս կարգելով տես անուանիս յառաջ քան զարարակաշինութիւնն, զինի հաւաքութեանն Քսիստրեայ ի Հայս՝ ճշմարտեան (որովհետեւ ս. Գրքի համեմատ են)։ Իսկ անուանցն փափոխմամբ և բազմոք աշխարհ ստեան (որովհետեւ ս. Գրքի համեմատ չեն)։ (Ա. դ.)։ Հմեմ. Ա. ե. գ. ք. ժր. ժր. ըս Լէնն։

1. Հմեմ. «Զճշմարտութեանն ոք խորենաց քանի զոմ յառասպելս զճշմարտութեան Խորենացի փոփոխել փոքրացի» (Ա. դ.)։ Յետոյ պատմեցուցի ոմով» (Ա. իր.)։ «Զի ոչ ճշմարտութեամբ ոմով պատմեւ և ոչ զանուանս նշանակի կամ զտեղի կատարմանցն, ոչ իմն կարեւորագոյն համարեցաք երկրորդել» (Բ. հն.)։ «Որով և ստուգագոյն եւ քննեցաք զամենայն ոմով» (Բ. ձգ.)։ «Ճանեցուցի որ ինչ կարեւորագոյնն է ոմոյ բանիս» (Ա. իգ.)։ «Անցի միայն զտեղիս նշանակելով զհաւաստին և զոմն ի քաց քողակ» (Բ. դ.)։ «Բայց քանի քաղութ են՝ որ ասեն զԻրիսսու մարտ Լուսնիսի կաշկար» եւ ոմով իմն պատմեւ ևս հաւանիս» (Բ. ձգ.)։ «Այս անմեայն ... այցոյ պատմալ յառաջագոյն քան զմեզ, ոչինչ կարեւորագոյն համարեցաք ոմով երկրորդել» (Բ. լղ.)։

1. «Ոչ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն և ըզտեսն»։

2. «Բայց զինչ արդեօք արեւմտի լեզ... զինչ լեզ առ աշխարհ կարօտութիւն... կամ զինչ պիտի»։

3. «Զկարի վարդոյ եղա իսս և նոցա անհասանելիս առասպել յայնմեմ»։

4. «Ի վերայ այցոյ անհեռաբան և անարար վասն քառարկոյ մար, կատարեմք և զայս»։



պատճառաւ»։ «միտս անմտութեան նոցա տալով»։ «Եւ զկարի վարուց նոցա իրս եւ նոցա անհատանելիս յայտնելով»։ այսինքն, մեկնելով «անոճ» առասպելներէրց հանել այն, ինչ որ «հաւատարի» է։<sup>1</sup>

Եւ ինչպէս է Մորենացին պարսից առասպելները մեկնում կամ իւր խօսքով «անհասանելին յայտնում»։ Նա նախ Բիւրասպին կապում է աշտարակաշինութեան ժամանակի եւ Ներքովթի հետ իբրեւ պարսից շնամնիւն, Ներքովթի իշխանութեան տակ եւ այնուհետեւ ամենայն ինչ ժամանակի հասկացողութեանն ու բանական խելքին յարմարեցնելով անհասկանալին, գերբնականը պլարանութիւն համարելով եւ ժամանակի հասկացողութեամբ բնականի վերածելով Բերինք առասպելի վերջին կտորը միայն իբրեւ օրինակ։ Առասպելի մէջ ասած է համառօտ թէ մանուկ օտտանան Աժդահակի ուսերը համբուրում է եւ «անդուստ» վիշապներ են ծնում կամ բուսնում եւ այնուհետեւ Աժդահակի չարութիւնը շատանում է («չարութեան յաճախութիւն») եւ նա ի պէտս որովայնի մարդիկ է սպանում («ծախել»)։ Իսկ յետոյ Հրուդէն անունով մէկը նորան կապում է պղնձի շղթաներով եւ տանում գէպի Դրմբաւընդ լեռը։ Ծանապարհին Հրուդէնը ննջում է եւ Բիւրասպը քաշում է նորան գէպի բլուրը, բայց Հրուդէնը զարթնում է եւ տանում է նորան լեռան այրերն ու կապում եւ իւր արծանը կանգնում նորա դիմաց («զինքն անդրի ընդդէմ նորա հաստատել»)։ որից սարսափելով Աժդահակ հնազանդեալ կայ շղթայիցն եւ չէ կարողանում ելնել եւ ապականել իրկիրը։ Այս առասպելը Մորենացին մեկնում է այսպէս. «Իսկ վիշապաց բուսումն կամ կատարելապէս վիշապանալն Բիւրասպեայ, որ ասի է այս թէ նա սկսեց անբաւ մարդիկ զոհել գեներին [առասպելի մէջ՝ ծախել զմարդիկ ի պէտս որովայնի], մինչեւ ժողովուրդը (բազմութիւն) տաղտկացաւ նորանից եւ հալածեց նորան, եւ նա փախաւ Դրմբաւընդ լեռան կողմերը։ Նո-

րան սաստիկ քշելուց՝ նորա մարդիկը (ամբօթ) ցրիւ եկան նորանից։ [Առասպելի մէջ՝ Հրուդէնը Աժդահակին կապած տանում է ոտըր]։ Այս բանին փտահացած՝ նորան քշողները մի քանի օր հանգստացան այն տեղերում։ [Առասպելի մէջ Հրուդէնը ծանապարհին ննջում է]։ Իսկ Բիւրասպը ժողովելով իւր ցրուած մարդիկը, յանկարծ վրայ է հասնում եւ սաստիկ վնաս է տալի նոցա։ [Առասպելի մէջ՝ Բիւրասպը ննջող Հրուդէնին դէպի քլուրն է քաշում]։ Բայց բազմութիւնը յայլ թում է Բիւրասպին եւ նա փախստական է լինում ետեւից հասնում սպանում են նորան եւ ձգում մի ծծմրի մեծ վիհ։ [Առասպելի մէջ՝ Հրուդէնը զարթնում է եւ տանում Բիւրասպին լեռան այրերն ու կապում եւ ալըն]։

Ինչպէս ընթերցողը կրտսնէ, Մորենացին իւր մեկնութեան մէջ, թէպէտ եւ հականը պահելով ըլլորովին նոր բան է պատմում իրենից։ Նորա պատմածն այլ եւս առասպելի գոյն չունի, այլ պատմական կամ բնական իրողութեան։ Դուրս են ձգուած կամ բնական, խելքի մօտիկ չլինուած գերբնական եւ վիպական գծերը, ինչպէս են՝ վիշապաց բուսումն կամ Բիւրասպի կատարելապէս վիշապանալը, Հրուդէնի զինքն անդրի ընդդէմ նորա հաստատելը, Աժդահակի սարսափահար ու շղթայուած ֆիալն այրումը եւ չկարողանալը դուրս գալ աշխարհն աւերելու, Հրուդէնի ննջիլը ճանապարհին, Աժդահակի նորան գէպի սարը քաշելը, ի պէտս որովայնի մարդիկ կոտորելը եւն, Բերած օրինակից շատ պարզ է, թէ Մորենացին ինչպէս է ըմբռնում առասպելները եւ ինչպէս է մեկնում անոնք, «անզարդը զարդարում», «անահասանելին յայտնում» եւ կամ առասպելի միջից, որ այլաբանութիւն է, «հաւատարի» դնում եւ առնում։

✚ Հայոց առասպելները Ծառ տարօրինակ կըլինէր, որ Մորենացին նոյն հայեացքը չունենար, մեկնելու եւ օգտուելու նոյն եղանակը չործադրէր եւ հայոց առասպելների վերաբերմամբ, ինչ որ յունաց եւ պարսից։ Եւ Մորենացին չէ թաղցնում այդ նա շատ պարզ յայտնում է, որ նորա համար առասպելն առասպել է, լինի յունաց, պարսից թէ հա-

1. «Ստորագրութիւն, որ ինչ սակա Բիւրասպեայ հաւատարի է»։ Հմմտ. «Մնացեալ գոր ինչ հաւատարի կարծեմ անուր» (Ա. 9)։



յոց. միայն մէկը կարող է քակրձ և ողորկ. «ոճով» լինել միւսը՝ ոչ։

Տեսնենք հայոց առասպելները ամենից առաջ Արտաւազդինը, որ Աժգահակի առասպելին նման է։

Արտաւազդի մահը պատմելիս (Բ. կա) ասում է, Գողթան երգիչներն առասպելաբանում են, թէ Արտաւազդը նախանձել է հօր փառքին, ուստի և հայրն անիծել է որդուն, որ որսի գնալիս քաջք բռնեն նորան և տանեն յազատ ի վեր ի Մասիս. այնտեղ մնայ և լոյս չտեսնէ։ Այնուհետեւ ըստ առասպելին, Արտաւազդը երկաթի շղթաներով կապուած է մի այրի մէջ, երկու շուն կրծում են շրջթան, Արտաւազդն աշխատում է ելնել և վերջ տալ աշխարհին, բայց դարբինների կրօնահաշարութեան ձայնից կապանքը զօրանում է։ Արտաւազդի մահուան մասին այս ժողովրդական առասպելը, գերբնական բան ունենալով իւր մէջ, խելքի մօտիկ ու ճշմարտ է։ Բայց Խորենացին այլաբանութիւն է համարում. «Արտաւազդայ» մահ հանգերձ պլաբանելով, ուստի և աւելացնում է մեկնելով. «Բայց է ճշմարտութեամբ այդպէս, որպէս առաջաքս վերագոյն»։ Իսկ վերեւում պատմել է բնական իրողութեան գոյնով, թէ Արտաւազդը «անցնալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի՝ որսալ կինձա և իշափայրիս զակամբք Գինայ, աղմկեալ իմն ի ցնորից խելադարանաց, ընդ վայր յածելով երկվարան, անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյգ լեալ անհետի»։

Առասպելն ասում է. «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ և լիւ լիւսնակ եղին»։ Բայց այդ գերբնական է, խելք-

քի մօտիկ է, ուստի և ոմանք, անշուշտ առասպելը մեկնելով, «համարեցան կախարդել զայս (զԱրտաւազդ) կանանց զարմիցն Աժգահակայ»<sup>1</sup> քանի որ ժամանակի հասկացողութեամբ կախարդելուն կարելի էր հաւատալ, իսկ որ մարդիկ երեխայ գողանան և տեղը դնել գնեն՝ ոչ։ Սակայն Խորենացին աւելի «բանաւոր» է մտածում. նա Արտաւազդի կախարդութեամբ լինելուն էլ չէ հաւատում և գրում է. «Բայց ինձ արդարացեալ թուի լուրն այն, թէ ի ծննդնէն եւ եթ մոլորութեամբ լեալ, մինչ նովմիս եւ վախճանեցաւ»։

Ուրեմն բոլոր «հաւաստին» ինչ որ իրբեկ պատմական բերում է Խորենացին Արտաւազդի մասին, այն է՝ թէ նա խելթ ու խելազար (մօլի) ծնուել է և որսի ժամանակ խելազարուած ընկել է Մասիսի վհերից մէկն ու անհետացել։ Մնացածն առասպելներ են, որոնք, սակայն, «ճշմարտութիւն իրացն սյալարանար յիշեանա ունին թաքուցեալ»։ Եւ երբ մի անգամ գիտենք, թէ ինչ եղանակով Խորենացին առասպելների մէջ այդ «թաքուցեալ ճշմարտութիւնը» կամ հաւաստին մեկնելով հանում է առասպելից, և այն, որ նա իւր պատմութիւնը «ոճով» է գրում—սխալութեամբ չենք լինի, եթէ ասենք, որ Արտաւազդի մասին բոլոր հաւաստին էլ մի մեկնութիւն է, միայն որ «ոմանք» կամ հենց ինքը պատմողները տուել են առասպելի մէջ պատմութեամբ ինչ։<sup>2</sup>

Անցնենք միւս առասպելներին Գիտենք, Արտաշէսի մասին «Վիպասանք» առասպելն է։ Բ. խմբ. «Վիպասանայ» բովանդակութիւն-

1. Հմմտ. մեկնելու ժամանակ զարձ դրած մեկեր. «Յայտարարին ակաւոյս քի բոս առաջնոցն տապալել է Բեղդ, բոս տեսածային բանից մշմաւորս քի աւարտ Եւրոպի է (Ա. Ե.)։ Եւսինք զմիտաց սնուն... մըշմաւորս Եւրոպի է (Ա. Ե.)։ «...Ու ինչ սակա Բիւրասպալ է աւաստի... «Եւ այս է աւաստի Եւրոպի անբարի բարեարարին»։ «Եւ միշտ պաշտարարում... է այս Բ. (աւելում)։ «Յիշատակացով և մի կարճաւորս, և զայն քաղաքին են ճշմարտեւսցուց»։ «Ու եւ մշմաւորս քի աւարտ Եւրոպի է (Ա. Ե.)։ «Եւ այս է մըշմաւորս քի քանից»։ (Բ. Ժ.) «Բայց ինձ առաջադրեալ քի քի յուրն այն» (Բ. կա) և արեւելք (Ա. Ե. Բ. Ժ.)։

1. Մեկ կարծիք լսեմ է այս քի այս մեկնութիւն լէ՝ այն նախադրանքն, որ Խորենացին նախ քերում է մեկնութիւնը կախարդելու մասին և ապա առասպելը։ Մեկնութիւն լինելը պարզ երեւում է կապով խոսքերից. «Եւ զայս նայն երգից յառաւապի ին ասեւն աշտպիս»։ Հմմտ. Ա. գրքի Բ. յաւելումն, որի մեջ նշանակաւ առաջ մեկնութիւնն է քերում և ապա առասպելը վերջի վերջ մեծ կապով խոսքերով. «Զոր յառաւապի ինձ մոնոյ սասանայ, ասեւն, սպասարարով...»։

2. Հմմտ. քի ինչպիս Խորենացին Հրոյգիկի կապին Ամպանակին աշի մէջ կայն, դարձնում է՝ սպանեցին Ամպանակին և ձգեցին մի վրէ։ Այսպիս և սուր ժամանակ Արտաւազդի բռնութիւնը լաւեւից կայն, դարձել է՝ Արտաւազդ որսի ժամանակ ընկել է մի վրէ և կորել։



նր բերելուց յետոյ աւելացնում է. «Երկա-  
տակեացութեւն և մեք կարճառօտութիւն և զայլա-  
րանութիւնն ճշմարտեացութեան: Արդ ինչպէս  
պէտք է նա այս առասպելի մէջ եղած ոյլա-  
րանութիւնը ճշմարտէ: Անշուշտ մեղ արդէն  
ճանօթ ձեռքի վկայատանաց, ետեան մասը  
պատհարով մեկնութիւններ պիտի անէ. իս-  
կապէս մի նոր բան պէտք է շարադրէ իրե-  
նից վկայականին ու առասպելականին պատ-  
մական ու բնական զոյն տալով գերբնա-  
կան ու անհաստատի բաները դուրս պիտի  
ձգէ. կամ իւր ժամանակի հասկացողու-  
թեանը յարմարեցնէ, կամ թէ բանական  
(rationnel) պիտի դարձնէ: Թէ իրօք այդպէս  
էլ վարուած է պատմագիրը՝ այդ մասին յե-  
տոյ՝ երբ վկայատանաց երգի մասին կը գը-  
րենք: Երկնք միայն առաջուց, որ առասպե-  
լի մէջ ասած է, օրինակ թէ Սաթենիկ վի-  
շապ կամ վիշապազունը է սիրելի Մորենացին  
համարում է այդ առասպելութեան սուտ գի-  
տելքի մօտ բան չէ՝ որ մի թագուհի վիշապ  
սիրած լինի. սակայն այդ առասպելն իւր  
մէջ ոյլարանօրէն հաւաստի բան կարող է  
ունենալ. ուստի և վիշապի ու վիշապազանց  
տեղի մեկնելով, դնում է Մարք և Մուրա-  
ցան տէր Արդամ:

Սանատրուկի ձիւնի տակ մնալու մա-  
սին «առասպելաբաններ և թէ կենդանի իմն  
նորահրաշ սպիտակ յաստուած ոյն առաքեալ  
պահէր զմանուկն» (Բ. լդ): Բայց քրիստո-  
նեայ և առաքելական Մորենացին այդպիսի  
բանի չէ հաւատարմ ուստի և անմիջապէս  
մեկնում է. «Բայց որչափ եղաք վերահասու  
այսպէս է շուր սպիտակ ընդ խնդրակա լեալ  
պատահեաց մանկան և դպեկին»:

Երուանդի մասին ասում են. «Ըսա հը-  
մայից զժնեայ գոլով ական հայեցուածով  
վան որոյ ընդ այգանալ աշարջացն սովորու-  
թիւն ունել սպասաւորացն արքունի վմն  
որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և  
ի հայեցուածոյն զժնութենէ ասեն պայթել  
որձաքար վիմայն»: Պատմագիրն այս բանը  
սուտ և առասպել է անուանում իրրեւ մի  
անհաստատի բան. բայց և անմիջապէս հա-  
ւատալի կացուցանելու համար՝ փոխում է  
մեկնելով իւր ժամանակի հասկացողութեամբ

և հաւատարկութ. «Եւ կամ դիւական ինչ  
սո իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հա-  
յեցուածոյն անուամբ մնասեցէ զօրս կամի»  
(Բ. խր):

Առասպելների մէջ Դոմեա զոյն ասեն  
եկեալ. Հայաստան Արտաշէսի դէմ կռուե-  
լու: Մորենացին այդ Դոմեան համարում  
է «ինքն կայսրն Դոմեականոս», բայց որովհե-  
տեւ երեւի ուրիշ աղբիւրներէից զիտէ, որ Դոմե-  
ականոս կայսրը Հայաստան չէ եկել կռուելու,  
ուստի մեկնելով բացատրում է առասպելը.  
«Ոչ (Դոմեականոս) եկեալ այսր այլ զճրաման  
նորա և զզօրս այլաբանելով յանուն նորա  
կոչեն» (Բ. ծդ):

Թողնում ենք միւս առասպելներն ու  
անոնց մեկնութիւնները: Բերած օրինակներից  
արդէն երեւում է պատմագրի հայեացքն ա-  
ռասպելների վրայ և թէ ինչպէս նա ամեն մի  
առասպելական պատմուածք ևս սուտ հա-  
մարելով հանդերձ, կարող է այլաբանութիւն  
համարել և մեկնելով միջից «այլաբանօրէն  
թաքուցեալ ճշմարտութիւնը» հանել իրրեւ  
հաւաստի ստորագրուածութիւն: Սակայն այդ  
«հաւաստին» ինչպէս բերած օրինակներից  
կրտսնէ, ընթերցողը մի բոլորովին նոր շա-  
րադրած, իսկապէս յերիւրած պատմութիւն  
է, որ շատ անգամ առասպելի հետ նմանու-  
թիւն իսկ չունի:

Այսպիսի յերիւրած, «այլաբանութիւնը  
ճշմարտած» առասպելներն այլ ևս անշուշտ  
ժողովրդական առասպել կոչել կարելի չէ, այլ  
մի միայն պատմագրի կամ նորա նման մտա-  
ծողների մի յօրինուածք, որ թէպէտ և  
առասպելի հիման վրայ շինած, բայց առաս-  
պելի մասին դադափար տալ չէ կարող: Ուս-  
տի շատ զգոյշ պէտք է լինել իրր ժողովրդա-  
կան առասպելից քաղած այսպիսի կտորների  
վերաբերմամբ, քանի որ անոնք, — «անգարդ»  
լինելով և ապա «զարդարուած» «անոն» լի-  
նելով և ապա «ոճով և հանդերձ պատճառաւ  
շարադրած», «անհասանելի» կամ «անյայտ  
իրք» լինելով և ապա «յայտնուած», մի խօս-  
քով առասպել լինելով, բայց մէջն այլաբա-  
նութիւն անսնող պատմագրի կողմից «ճշմար-  
տուած» կամ «ճշմարտապատմութիւն» շի-  
նուած, — կարող են հաղուադէպ մի բառ կամ



նախադասութիւն թուն առասպելից ունենալ իրենց մէջ:

Սակայն չնայելով սորան, պ. Սալաթեանի քննադատութեան մի որոշ մասն այսպիսի «գարդարեալ» իբր ժողովրդական առասպելներն զէմ է ուղղուած: օրինակ՝ վիպասանաց երգի նկատմամբ: <sup>1</sup> Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ պ. Սալաթեանի քննադատութիւնն այդ կտորների վրայ՝ կարող չէ ապացուցանել թէ գոյութիւն չեն ունեցել հայոց «վիպասանք»: ուստի մենք աւելորդ ենք համարում կանգ առնել այդ մասին: <sup>2</sup>

Սակայն պ. Սալաթեանի վարուելու եղանակը տեսնելու համար մի բան կարելի չէ առանց նկատողութեան թողնել: Չնայելով որ նա գիտէ, որ այդ «այլաբանութիւնը» Մորենացուն է և որ պատմագիրն ինքն է այդ այլաբանութիւնը վերագրում հայ երգիչներին, <sup>3</sup> բայց և այնպէս նա յաճախ այդ «այլաբանութիւնը» գործ է ածում իբրեւ մի միջոց հայոց հին Վէպի գոյութիւն չունենալը ցոյց տալու համար, երբեմն ծաղրելով, <sup>4</sup> երբեմն մոռանալով իւր ասածը և ինքն իրեն հակասելով զրելով, որ իբր թէ Մորենացին յայտնում է, որ «ընդհանրապէս ամեն մի այլաբանութիւն իւր Պատմութեան մէջ ժողովրդական երգիչներին է պատկանում»: <sup>5</sup> Եւ ոչ միայն այդ, այլ շատ աւելին: Իբր թէ Մորենացին «առասպել գործ է ածում առանձնապէս յաճախ ժողովրդական ընաստեղծութեան տեսակներից մէկն նշանակութեամբ, և առասպել բառով հասկանում է ոչ միայն միթոս (миф), այլ, ըստ երևութիւն, և այլաբանութիւն, այն էլ այլաբանութիւնը երգի մէջ. այսպէս ասած — այլաբանական երգ» <sup>6</sup>: Եւ էլ այնուհետեւ պ. Սալաթեանն ազատ է համարում իրեն «ա-

ռասպելք» թարգմանելու «այլաբանութիւն» <sup>1</sup> և իբրեւ հիմունք ծառայեցնում է «Թուելիք» բառին քմահաճոյարար տուած այլաբանութիւն նշանակութիւնը:

Բայց պ. Սալաթեանը մոռանում է դարձեալ, որ, եթէ «առասպել» թարգմանում է մի տեղ «այլաբանական երգ», միայն այն հիման վրայ, որ Մորենացին առասպելի մէջ այլաբանութիւն է տեսնում — էլ ինքն ինչ հիման վրայ ասում է թէ Մորենացին «առասպել» ասելով հասկանում է և «միթոս» (миф) և ի միջի այլոց իբրեւ կոչումն բերում է «Պարսից առասպելաց», յաւելուածը և Բ. զրբի է. զլուխը և ինչ: <sup>2</sup> Երկած տեղերում են յունաց և պարսից առասպելները և Հաղամակերտում Արծրունեաց մասին պատմուած՝ արծուի հովանի անելու առասպելը: Եթէ հայոց միւս առասպելներն «այլաբանական երգ» են, չգիտենք ինչո՞ւ Հաղամակերտում պատմուած առասպելը միթոս պիտի լինի: Միւս կողմից՝ բանական դատողութիւնն ասում է, որ, եթէ հայոց առասպելները Մորենացու անոնց մէջ տեսած այլաբանութեան պատճառով «այլաբանական երգ» է համարում պ. Սալաթեանը, պարսից և յունաց առասպելներն էլ նոյն պատճառով «այլաբանական երգ» պիտի համարէր, քանի որ, ինչպէս տեսանք, Մորենացին այդ առասպելներն էլ այլաբանութիւն է համարում: Իսկ եթէ վերջիններս միթոս են, նոյնը պիտի լինին և հայոց առասպելները — թէ չէ, քմահաճոյ բացատրութիւն է և զօրով ցանկանալ, որ հայոց առասպելներն «այլաբանական երգ» գառնան:

Այսպէս Մորենացու մէջ իբրեւ առասպել յիշուածը ֆիւմ է առասպել, քանի որ կարելի է չէ Մորենացու հայեացքն առասպելների վրայ և նորա տուած մեկնութիւնը (Mythendeutung) իբրեւ փառա ծառայեցնել: Եւ Մորենացին մենակ չէ եղել, որ առասպելի մէջ այլաբանութիւն է տեսնում: Առասպելի միթոսի մեկնութեամբ միշտ պարապել են մարդիկ և զանազան ձևով մեկնել, եթէ այժմեան գիտութեան մէջ իշխում է այն

1. Халатъ Арм. Эпосъ եր. 279 հտն.

2. Հմմտ. այս մասին, ինչպիսի և առասպելի մեկնութեան մասին, Մատ. Визант. Времен. III. V. 1598 եր. 254 հտն.:

3. Халат. Арм. Эпосъ եր. 198, 247-305.

4. Նոյն, 198, 250, 251, 268 և ուրիշներ:

5. Նոյն եր. 245.

6. Նոյն. եր. 44:

1. Նոյն. եր. 45. Նաև ծան. 8, 9:

2. Նոյն. եր. 44. Նաև ծան. 4:



միտքը թէ՛ «առասպելը» շատ հազուադէպ մի այլարանական կամ վերացական — փիլիսոփայական զաղափար կրթականդակէ իւր մէջ, ուստի և կարելի չէ սիմբոլական — այլարանական (symbolisch — allegorisch) մեկնութիւն տալ միթոսին, այլ թէ աստուածների և առասպելների ծագումը մեծ մասամբ ֆիզիկական երևոյթներով պէտք է բացատրել — մի ժամանակ էլ այլարանական և եւհեմերական մեկնութիւնն էր իշխում: Եւ Մորենացին իհարկէ մեղաւոր չէ, որ իւր ժամանակի գիտութեան մէջ իշխող հայեացքի համեմատ ինչ որ առասպելական է և անհասկանալի՝ այլարանութիւն է համարում և իրրեւ ռացիոնալիստ բանական խելքի մօտիկ մի պատմութեամբ շինելով, մարդկօրէն պատմութեամբ է մեկնում առասպելը: Այն ինչ որ Մորենացու համար մեծ արժէք ունէր — առասպելների մեկնութեամբ յօրինած, յիւրիւրած պատմութիւնը, մեղ համար հարկաւանարժէք է: Ուստի և հայոց առասպելների մասին դատելուց առաջ՝ միշտ պէտք է որոշել թէ որոնք են այդ առասպելները, այսինքն քուն ժողովրդական անջատել Մորենացու «զարդարեալ» առասպելներից — մի անհրաժեշտ բան, որ ամեն հետազօտող պէտք է անէ, բայց պ. Խալաթեանը դժբախտաբար նեղութիւն չէ կրել անելու, ուստի և նա հայոց ժողովրդական առասպելների մասին յաճախ պարզ զաղափար անգամ չունի: Եւ այդ անելը դժուար չէ, քանի որ Մորենացին ինքն էլ սովորաբար որոշ ասում է թէ՛ որն է բուն առասպելը, և որը իւր «զարդարեալ» պատմութիւնը:

Թէպէտեւ ցաւ է, որ յիւրիւրած կտորները բաւական մեծ տեղ են բռնում Մորենացու մէջ, բայց, բարեբախտաբար, յաճախ նա նախ բերում է և առասպելի կարծառօտ բովանդակութիւնը, երբեմն մինչև իսկ առասպելի խօսքերով, և ապա իւր մեկնութիւնը կամ յերիւրումը: Այսպիսի դէպքերում մեկնութիւնը կամ դարձեալ բնանշանակութիւն պիտի չունենայ, կամ այն չափով միայն նշանակութիւն պիտի ունենայ, որ բուն առասպելի բովանդակութիւնն իմանալով կարելի է քննադատելով աւելի հեշտու-

թեամբ ընդունել թէ՛ այս կամ այն բան ու ասացումը «մեկնութեան» մէջ առասպելից է վերցրած, թէ չէ:

Մի երրորդ ձևով էլ օգտւում է Մորենացին առասպելներից, բերելով անոնց բովանդակութիւնն առանց «մեկնութեան», կամ այն պատճառով, որ արհամարհում է այդ առասպելները, ինչպէս հաղամակերտում պատմութեամբ և Տորքի առասպելը, կամ բաւականաւոր է միայն այնու, որ իւր՝ որեւէ զբաւոր տղիւրից առած պատմութեանն իրրեւ վկայութիւն է կոչում: Ինչպէս Շամիրամի մահուան առասպելը:

Մորենացին ինչքան էլ առասպելներ յիշում է, չենք կարող ասել, թէ շատ է օգտւում առասպելներից: Այդ պատճառը, հասկանալի է, Մորենարու հենց այս հայեացքն է առասպելների վրայ: Նորա աշխիւ ըստ ժամանակի հասկացողութեան, ամեն մի զբաւոր յիշատակարան, թէկուզ անվաւեր մի գրութեամբ, որովհետեւ իւր մէջ հաւատալի բան ունի, աւելի մեծ արժէք ունի, քան թէ առասպելը, որը, եթէ չէ մեկնութեամբ և միջի «հաւաստին» առած, նոյն իսկ սուտ պատմութիւն է համարում: Եւ որովհետեւ Մորենացին պատմութիւն է գրում և ոչ թէ առասպելարանութիւն, ուստի և որքան կարելի է քիչ այն էլ յաճախ «մեկնելով» է օգտւում առասպելներից, որպէս զի մի գուցէ իւր գրած պատմութեան արժէքն ընկնի առասպելներով: Այսպէս օրինակ Բ. կդ. որոշ կերպով գրում է նա. «Որ չափ էր հնարի փախեալ յաւելորդ և պաշտօնաւ բանից և որ ինչ յանաւատիկ հայեր ըսնն եւ մտածութիւնն. միայն զհետեւ թաւով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուտ եւ կամ ի մէջ՝ զարդարոյն եւ զճշմարտի: Զնոյն և աստանօր պատրաստելով արգելում՝ զընթացս ըսնից յոչ պատշաճէն և որ զանհաւատութեանն ի ներքս ածել ակնարկէ կարծիս: Եւ զքեզ, որպէս բազում անգամ և այժմ աղաչեմ մի՛ յաւելորդսն հարկաւորել զմեզ և սակաւ կամ յոյժ բանիք՝ զմեծ և զհաւաստի բովանդակ աշխատութիւնս՝ ընդ վայր եւ աւելորդ ցուցանելով զործ. զի նմանագոյնս որպէս ինձ՝ և քեզ զործէ վտանգս»:

Մ. Արեղեան.

(Երեսնամեակէն).